ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

16 մարտի 2015թ. թիվ 89-Ա

ԳՈՒՅՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱԿՏԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ
ԵՎ «ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄ» ՊԵՏԱԿԱՆ
ԿԱՌԱՎԱՐՉԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿԻՆ ԳՈՒՅՔ ԱՄՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ի կատարումն Հայաստանի Հանրապետության կառավարության 2015թ. հունվարի 15-ի «Գյուղական բնակավայրերում գործող առողջապահական պետական փակ բաժնետիրական ընկերությունները վերակազմակերպելու մասին» թիվ 41-Ա որոշման 1-ին կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» թիվ ՆՀ-728 հրամանագրի 1.17 կետի «ա» ենթակետով՝

Ո ր ո շ ու մ եմ.

1. Հաստատել «Մեծ Պարնիի առողջության կենտրոն» պետական փակ բաժնետիրական ընկերության ակտիվների կազմից առանձնացված շենքերն ու շինությունները «ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին որպես պետական սեփականություն ամրացվող գույքի հանձնման-ընդունման ակտը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշման 1-ին կետով հաստատված ակտում նշված շենքերն ու շինությունները, որպես պետական սեփականություն, ամրացնել «ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակազմ» պետական կառավարչական հիմնարկին:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2015թ. մարտի 16
ք.Վանաձոր